



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 187 - Ա

23 մայիսի 2019 թ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՈՒՐԴԱԿԻ
ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՍԻՐՎԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 158-րդ, 160-րդ և 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Գոհար Ջալիկի Բաղայանի դիմումը

կարգադրում եմ՝


1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Ջալիկի Բաղայանին 2019 թվականի մայիսի 27-ից մինչև 2019 թվականի հունիսի 10-ը ներառյալ տրամադրել 2019 թվականի ամենամյա երկարացված արձակուրդից 10 աշխատանքային օր:

2. 2019 թվականի մայիսի 27-ից մինչև 2019 թվականի հունիսի 10-ը ներառյալ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների

իրականացումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիրակչական աշխատանքների կազմակերպիչ Սիրվարդ Հայրապետյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

3. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի հունիսի 11-ից:

23.05.2019



ՄԱՐԶՊԵՏԱՐՈՒ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԳՅՈՒԼԻ ԴՊՐՈՑ GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ